ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՏՈՒՆԴԱՐՁԻ ՀԱՐՑԸ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
(1919 թ. մարտ-մայիս)

ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գաղթականների տունդարձի խնդիրը Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքական օրակարգում որպես առաջնահերթ հարց դրվել է դեռևս Առաջին աշխարհամարտի վերջին ամիսներին (1918 թ. հունիս–հոկտեմբերին)[1]: Պատերազմում Համաձայնության պետությունների հաղթանակից հետո ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գաղթականների հայրենիք վերադառնալու կամ, ինչպես իրենք՝ արևմտահայերն են անվանել, Արևմտյան Հայաստան ներգաղթի խնդիրը[2] Հայաստանի Հանրապետության համար շարունակել է մնալ անհետաձգելի լուծումներ պահանջող արտաքին քաղաքական կարևոր հարցերից մեկը[3]: Պետական-քաղաքական ականավոր գործիչ Ա. Խատիսյանը նշել է, որ Այսրկովկասում «Համաձայնության նեկայացուցիչներու հետ եղած բանակցությունները գլխավորապես կը վերաբերեին կովկասյան պետություններու սահմաններու որոշման: Հայաստանի սահմանները թրքական գրավումեն ազատելու և շուտափույթ հնարավորություն ստեղծելու թրքահայ գաղթականներուն թուրքաց Հայաստան վերադառնալու համար»[4]:

Արտաքին քաղաքական այդ խնդիրների լուծման նպատակով Այսրկովկասում Համաձայնության պետությունների ներկայացուցիչների հետ դիվանագիտական շփումների ժամանակ Հայաստանի կառավարության համար որպես հիմնական բանակցային կողմ հանդես են եկել Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները՝ ի դեմս

---

[1] Տե՛ս «Զանգ», 7. VIII. 1918, «Հորիզոն», 15. VIII. 1918, նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, վավ. 35, էջ 58, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., Երևան, 2010, էջ 11:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 31, նաև՝ Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, 1919, էջ 4, 12:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 145, թթ. 16–17:

[4] Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 140–141:

Թիֆլիսում տեղակայված բրիտանական զորքերի հրամանատարության բարձրաստիճան սպաների: Նրանց հետ շփումների, բանակցությունների և խորհրդակցությունների ժամանակ ՀՀ կառավարության կողմից մշտապես բարձրացվել է Կարսի, Շարուր-Նախիջևանի և Արևմտյան Հայաստանի հայ փախստականների տունդարձի հարցը: Սակայն մինչև 1919 թ. մարտի կեսերը գաղթականների հայրենիք վերադառնալու խնդրին բրիտանական զորքերի հրամանատարության կողմից այդպես էլ որոշակի լուծումներ չեն տրվել, ի վերջո, գաղթականների հայրենիք վերադարձի հարցի լուծումը թողնելով Փարիզի Հաշտության վեհաժողովին:

Միայն 1919 թ. մարտի կեսերից իրավիճակը՝ մոտեցումների և մթնոլորտի առումով, էապես փոխվել է: Ծրագրավորելով մոտակա ժամանակահատվածում բրիտանական զորամասերը Հայաստանից, այնուհետև Այսրկովկասից դուրս բերելու գործընթացի կազմակերպումը, բրիտանական հրամանատարությունը՝ դուրս բերվող զորամասերի անվտանգությունն ապահովելու, տարածաշրջանում կայունություն և կարգուկանոն հաստատելու համար կտրուկ շրջադարձ է կատարել իր կողմից իրականացվող քաղաքականության մեջ՝ վերջինիս շրջանակներում ձեռնարկելով ռազմաքաղաքական ու դիվանագիտական կոնկրետ և գործնական քայլեր:

Այդ քաղաքականության հիմքում ընկած է եղել այսրկովկասյան երեք հանրապետություններից որևէ մեկին վիճելի տարածաշրջանների կառավարման հանձնումը: Որոշակի լուծումներ է տրվել նաև այսրկովկասյան հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանային վեճերին: Նրանց կողմից այս կամ այն տարածքային կամ սահմանային խնդիրների լուծումների վերաբերյալ առանձին կամ երկուստեք արտահայտված առարկություններն ու բողոքները բրիտանական զորքերի հրամանատարությունը, որպես կանոն, չի ընդունել՝ հայտարարելով, որ վիճելի հարցերի վերջնական լուծումները թողնվում են Փարիզի Հաշտության վեհաժողովին: Կայունության և կարգուկանոնի ապահովման քաղաքականության շրջանակներում ձեռնարկվել են նաև Կարսի ու Շարուր-Նախիջևանի թուրքամետ խառնվարար մահմեդական հանրապետությունների վերացմանը ու դրանց կառավարման մարմինների (շուրաների) իշխանազրկմանն ուղղված գործողությունները և այդ տարածաշրջաններում կառավարման հանձնումը Հայաստանի Հանրապետությանը: Միաժամանակ նախատեսվել է իրականացնել բոլոր գաղթականների տունդարձը՝ դրանով իսկ լուծելով տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակն ապակայունացնող հիմնական գործոններից մեկի հետ կապված խնդիրները:

Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության կողմից իրագործվող քաղաքականության փոփոխության հետևանքով 1919 թ. մարտի կեսերից փոխվել է նաև իրավիճակը Հայաստանի կառավարության ու բրիտանական զորքերի հրամանատարության միջև դիվանագիտական շփումների և բանակցությունների ժամանակ: Այդ գործընթացում բրիտանական կողմից 1919 թ. մարտի 10-ից հետո

հանդես է եկել Բաքվից Թիֆլիս տեղափոխված, Այսրկովկասում բրիտանական զինված ուժերի նորանշանակ գլխավոր հրամանատար, գեներալ-մայոր Ուիլյամ Մ. Թոմսոնը[5]: Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է վարչապետի տեղակալ (պաշտոնակատար)[6], ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանը: Ա. Խատիսյանը, լինելով փորձառու ազգային-քաղաքական պետական գործիչ և ստանձնելով Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն պաշտոնը, ունեցել է դիվանագիտական աշխատանքի մեծ փորձ՝ դրսևորելով իրեն որպես նախաձեռնող, ինքնուրույն ձեռագիր ունեցող, շնորհալի դիվանագետ: Հասկանալով, որ 1919 թ. գարնանը Հայաստանի Հանրապետության սահմաններն ընդարձակելու և գաղթականների տունդարձն իրագործելու համար ստեղծվել է նպաստավոր միջազգային իրավիճակ, նա իր արտաքին քաղաքական ու դիվանագիտական գործունեությունը նպատակաուղղել է բրիտանական զորքերի հրամանատարության հետ այդ խնդիրների առաջնահերթ և հնարավորինս արագ լուծմանը: Արժանապատիվ ու հիմնավորված ներկայացնելով իր կառավարության դիրքորոշումները՝ Ա. Խատիսյանը փորձել է վերջիններիս դրդել իր երկրի համար բարենպաստ լուծումների: Բանակցությունների ժամանակ վիճելի հարցերի քննարկումների ընթացքում, մնալով իր սկզբունքային դիրքորոշումների վրա, Ա. Խատիսյանը կարողացել է իր տեսակետները և մոտեցումներն այնպես հասցնել մյուս կողմին, որ նրանց մոտ չի առաջացել հակազդեցություն:

Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության քաղաքականության փոփոխության մասին առաջին վկայությունն է 1919 թ. մարտի 14-ին գեներալ Ու. Թոմսոնի կողմից այսրկովկասյան հանրապետությունների ղեկավարությանն ուղղված տարածքային և սահմանազատման հարցերի լուծման համար համապատասխան միջկառավարական կոմիտեի կազմավորման մասին առաջարկությունը[7]: Գեներալի ղեկավարությամբ գործող այդ կոմիտեում պետք է ընդգրկվեին յուրաքանչյուր երկրի կառավարության երկուական ներկայացուցիչ: Այստեղ նախատեսվել է քննարկել վիճելի տարածքների պատկանելության և այսրկովկասյան երեք հանրապետությունների միջև ժամանակավոր սահմանազատման հետ կապված հարցերը: Քննարկումների արդյունավետությունն ապահովելու նպատակով Ու. Թոմսոնի կողմից սահմանվել է կոմիտեի առանձնահատուկ աշխատակարգ, որի համաձայն կողմերի միջև տարաձայնությունների ժամանակ գեներալի որոշումը

---

[5] *Տե՛ս Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, հ. I, Երևան, 2005, էջ 233:*

[6] *Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրություններում Ա. Խատիսյանի այդ պաշտոնը սկզբից նշվել է որպես Մինիստր-նախագահի (վարչապետի) տեղակալ, այնուհետև՝ Մինիստր-նախագահի պաշտոնակատար:*

[7] *Տե՛ս* Великая Октябрьская революция и победа советской власти в Армении (сборник документов). Ереван, 1957, с. 260–262.

պետք է վերջնականը լիներ: Այդ վճիռը լինելու էր ժամանակավոր և չէր կարող որևիցե ազդեցություն ունենալ փարիզյան Հաշտության վեհաժողովի հետագայում ընդունվելիք որոշումների վրա: Ու. Թոմսոնի կայացրած որևէ վճիռ իրենց չբավարարելու դեպքում շահագրգռված կառավարությունները պետք է սպասեին վեհաժողովի որոշումներին՝ չձեռնարկելով դրանց դեմ ոչ մի հակառակ գործողություն: Այսրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչները ձայնի իրավունք են ունեցել միայն իրենց պետություններին վերաբերող վիճելի տարածքների պատկանելության և սահմանազատման մասին հարցերի քննարկման ժամանակ:

Այնուհետև, նշված փաստաթղթում՝ նորից ընդգծելով, որ առաջարկվող և ընդունվող որոշումները ժամանակավոր են, որ դրանք արվելու են տարածաշրջանում կարգ ու կանոն ապահովելու նպատակով, և որ չի կարող խոսք լինել այդ շրջանների բռնի կամ զինված բռնագրավման մասին, ամրագրվել է այն սկզբունքային դիրքորոշումը, որ հացահատիկի օգնության բաշխումը և գաղթականների հայրենիք վերադառնալը պետք է իրականացվեն առանց ազգային խտրականության: Ընդ որում, գաղթականների վերադարձը պետք է կատարվեր՝ նկատի ունենալով գարնանային գյուղատնտեսական աշխատանքները ժամանակին իրականացնելու անհրաժեշտությունը[8]:

1919 թ. մարտի 28-ին Երևանում Ու. Թոմսոնի հետ նախատեսված բանակցությունների համար Հայաստանի կառավարության կողմից կանխավ պատրաստված հուշագրի քաղաքական բնույթի 7 «ցանկություններից» վեցերորդը վերաբերել է «թուրքահայերի հայրենիք վերադարձի պլանաչափ» կազմակերպմանը[9]: Հետաքրքրական է, որ կառավարությունը, բարձրացնելով արևմտահայ փախստականների տունդարձի հարցը, նախատեսել է ներգաղթի «պլանաչափ», այսինքն՝ ծրագրավորված կազմակերպելու անհրաժեշտությունը: Հասկանալի է, որ ծրագրավորման խնդիր է դրվել, որպես կանոն, այն միջոցառման կամ գործընթացի դեպքում, երբ դրանց իրականացումը համարվել է ավելի քան կոնկրետ և իրատեսական: Նշված հուշագրի չորրորդ կետում արևմտահայ փախստականների Ալաշկերտ և Վան վերադարձի կազմակերպման հետ կապված նշվել է մահմեդական զինված խմբերից Սուրմալուն մաքրագործելու և Կուլպայում (Կողբում) ու Արալիխում զինված հենակետեր տեղադրելու խնդրի առաջնահերթ լուծման անհրաժեշտությունը[10]:

Մարտի 28-ին Երևանում կայացել է Ա. Խատիսյանի առաջին խորհրդակցությունը Ու. Թոմսոնի հետ: Բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանը գեներալի առջև դրել է վերը նշված հուշագրով նախատեսված բոլոր խնդիրները, այդ թվում՝ Արևմտյան Հայաստան ներգաղթի հարցը: Գաղթականների վերադարձի հարցի

---

[8] Տե՛ս նույն տեղում, էջ 261:

[9] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 123, նաև՝ գ. 23, մաս 1, թ. 141:

[10] Տե՛ս նույն տեղում:

քննարկումը հետաձգվել է, ինչը Ու. Թոմսոնը պայմանավորել է Այսրկովկասում բրիտանական զորքերի թվաքանակի սակավությամբ և երկաթուղային ճանապարհների վիճակով[11]: Արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալուն արգելք հանդիսացող Սուրմալուի մահմեդական զինված խմբերի մասին հարցադրմանն ի պատասխան գեներալը նշել է, որ Սուրմալիում «…մենք ամեն բանում Ձեզ նեցուկ կհանդիսանանք: Դուք կարող եք գրավել կարևոր հենակետերը»[12]: Միաժամանակ, նա ափսոսանք է հայտնել, որ «անհնար է անմիջապես լուծել փախստականների վերադառնալու հարցը»[13]: Արդյունքում Ու. Թոմսոնը հայտարարել է, որ Հայաստանի կառավարության կողմից բարձրացված արևելահայ ու արևմտահայ գաղթականների հայրենի բնակավայրեր վերադառնալու հարցին նա վերջնական պատասխան կտա մի քանի օր հետո՝ խորհրդակցելով գեներալներ Ա. Բրաֆի և Ու. Բիչի հետ[14]: Ակնհայտ է, որ հայկական կողմից բարձրացված այդ հարցերին պատասխանելու համար Ու. Թոմսոնը պետք է նախնառաջ ստանար իր վերադասի համաձայնությունը:

Հայ-բրիտանական բանակցություններում մթնոլորտի բարելավման մասին են վկայել երևանյան խորհրդակցությունում Ու. Թոմսոնի կողմից հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության վերաբերյալ արտահայտված մտքերը: «Ինչ վերաբերում է մյուս հարցերին, ապա նա (գեներալ Ու. Թոմսոնը – Կ. Հ.) հավանում է Հայաստանի կառավարության քաղաքականությունը և խնդրում է մեզ չմտածել, որ միայն դուք եք տառապում, թեկուզ ձեր վիճակը ծանր է, բայց և դաշնակիցների համար ծանր ժամանակ է,– ասել է Ու. Թոմսոնը:– Մենք գիտենք թե ինչ է արվել հայերի կողմից պատերազմի ժամանակ: Գեներալը գիտի, որ հայկական զորքերը կլինեին Կարսում, եթե չլիներ օտար ճնշումը: Բոլորը՝ գեներալները և սպաները, մեծ համակրանքով են վերաբերում հայերին, սակայն ամեն ինչը որ հարկավոր է հայ ժողովրդի համար կարվի Փարիզում, այստեղ մենք մեր սուղ միջոցներով անում ենք հնարավոր բան»[15]: Հայկական կողմը Ու. Թոմսոնի արտահայտած այդ խոսքերը, ամենայն հավանականությամբ, լոկ որպես դիվանագիտական հաճոյախոսություն չի դիտարկել:

Ակներև է, որ Ու. Թոմսոնի հետ շփումների ժամանակ բանակցող կողմերի միջև փաստացի սկսել է հաստատվել փոխադարձ վստահության և փոխըմբռնման մթնոլորտ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը՝ նկատի ունենալով մարտի 28-ին Երևանում կայացած բանակցություններում գենե-

---

[11] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 144:*

[12] *Տե՛ս նույն տեղում:*

[13] *Տե՛ս նույն տեղում, թ. 144–145:*

[14] *Տե՛ս նույն տեղում, թ. 145:*

[15] *Նույն տեղում:*

ռալի մոտեցումները, փորձել է դիվանագիտական խողովակներով արագացնել գաղթականների տունդարձի հետ կապված հարցերի լուծումները: Ապրիլի 1-ին Հայաստանի կառավարությունը լսել է «…մարտի 28-ին գեն. Տոմսոնի հետ ունեցած խորհրդակցության հետ կապված մի քանի հարցերի մասին» ՀՀ վարչապետի զեկուցումը, որում առանձնացվել է «Ղարս, Նախիջևան և Տաճկահայաստան» գաղթականների վերադարձի հարցը[16]: Քննարկման արդյունքում ՀՀ կառավարությունը որոշել է հանձնարարել արտաքին գործերի նախարարին «Թիֆլիսի մեր Դիվանագիտական Միսիայի միջոցով դիմել Անգլիական հրամանատարությանը՝ հարցին շուտ լուծում տալու համար»[17]:

Ապրիլի 2-ին և 3-ին Բաթումում Ու. Թոմսոնի և նրա անմիջական ղեկավար՝ Արևելքում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջորջ Ֆ. Միլնի[18] միջև կայացած քննարկումների արդյունքում որոշվել է Կարսի մարզը և Նախիջևանի տարածաշրջանը հանձնել «հայկական կառավարության վարչությանը, մինչև հարցի լուծումը Հաշտության վեհաժողովի կողմից»[19]: Բրիգադային գեներալ Քիթ Մ. Դեյվիին ապրիլի 4-ին ուղղված հրահանգներում գաղթականության վերադարձի հարցում մատնանշվել է հետևյալ քաղաքականությունը. «Հայրենադարձությունը, ընդհուպ մինչև հին ռուսական սահմանը, պետք է սկսվի և հայերը աստիճանաբար վերաբնակվելու են իրենց տեղերում, ամբողջ գործընթացը պետք է ավարտվի մինչև 1919 թ. ապրիլի 30-ը»[20]: Ամրագրելով ընդհուպ մինչև հին ռուսական սահմանը հայ գաղթականների շուտափույթ վերադարձի իրավունքը, այդ փաստաթղթում, միաժամանակ, պարզաբանվել է, «որ ոչ մի պաշտպանություն ցույց չի տրվելու այն փախստականներին, որոնք կանցնեն այդ գծից այն կողմ»[21]: Ապրիլի 3-ին, երեկոյան ժամը 9-ին ուղարկված հեռագրով գեներալ Ու. Թոմսոնը Երևանում բրիտանական հրամանատարության ներկայացուցչին խնդրել է Ա. Խատիսյանին հաղորդել, որ ինքը՝ գեներալը, այժմ կարող է պատասխանել նրա կողմից բարձրացված հարցերի մեծ մասին, դրանցից մի մասին էլ՝ դրական իմաստով: Այնուհետև Ու. Թոմսոնը հրավիրել է Ա. Խատիսյանին այցելելու Թիֆլիս՝ նշելով ինչքան հնարավոր է արագ այցն իրագործելու կարևորությունը[22]: Գեներալը նաև նշել է, որ «ես նաև ուզում եմ

---

[16] Տե՛ս նույն տեղում, գ. 14, մաս 1, թ. 57:

[17] Տե՛ս նույն տեղում: Նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918–1920 թթ., Երևան, 2014, էջ 145:

[18] Հայկական արխիվային փաստաթղթերում տրվում է գեներալ Ջ. Միլնի հրամանատարական պաշտոնի նման անվանումը, իսկ Ռ. Հովհաննիսյանը, հիմնվելով բրիտանական սկզբնաղբյուրների վրա, տալիս է «Սևծովյան բրիտանական բանակի հրամանատար» անվանումը:

[19] Տե՛ս Ռ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 234–235:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 235:

[21] Տե՛ս նույն տեղում, էջ 236:

[22] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 146:

նրա (Ա. Խատիսյանի – Կ. Հ.), գեներալ Բրաֆի և ամերիկացիների հետ միասին լուծել փախստականների վերադարձի հարցերը»[23]: Հաջորդ օրը՝ ապրիլի 4-ին, կառավարության որոշման հիման վրա Ա. Խատիսյանը շուտափույթ մեկնել է Թիֆլիս[24]:

Ապրիլի 6-ից 8-ը Թիֆլիսում տեղի է ունեցել Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության հետ Ա. Խատիսյանի բանակցությունների հաջորդ փուլը: Այստեղ Ա. Խատիսյանը Արևմտյան Հայաստան ներգաղթի հարցի շուրջ բանակցել է գեներալներ Ու. Թոմսոնի և Ու. Բիչի հետ: Բանակցությունների օրակարգում «կենտրոնական տեղ» գրաված երեք հարցերից վերջինը վերաբերել է արևմտահայ փախստականների տունդարձին. «3) Արևմտյան Հայաստան հայ փախստականների վերադառնալու մասին հարցերի պարզաբանում և ընդհանրապես ապագայում Հայաստանի քաղաքական կարգավորումը, ինչպես տարածքի, այնպես էլ նրա պետական կարգի, մշակույթի վերականգնման և, ընդհանրապես, տերությունների և հարևանների նկատմամբ քաղաքական կողմնորոշման առումով»[25]: Ապրիլի 11-ի վաղ առավոտյան հասնելով Երևան[26]՝ Ա. Խատիսյանը կառավարությանը ներկայացրել է բանակցությունների մասին մանրամասն զեկուցում[27]: Ըստ այդմ՝ երրորդ հարցի հետ կապված Ու. Թոմսոնը հայտարարել է, որ ներկայումս արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալը հնարավոր չէ, քանի որ, մի կողմից, անհնարին է ապահովել ներգաղթյալների անվտանգությունը շարժի ժամանակ, մյուս կողմից, այդ հարցի լուծումը կապվել է Սևծովյան բրիտանական բանակի հրամանատար, գեներալ Ջորջ Ֆ. Միլնի Այսրկովկաս նախատեսվող այցի հետ[28]: Վերջին փաստարկը, ամենայն հավանականությամբ, հետապնդել է արևմտահայ փախստականների տունդարձի հարցի քննարկումներն առկախելու, ինչպես ասում են՝ «քնեցնելու» նպատակ, ինչը հնարավորություն կտար բրիտանական կողմին ապահովել իր համար ավելի կարևոր և առաջնային հետաքրքրություն ներկայացնող մյուս՝ Կարսում ու Շարուր-Նախիջևանում հայկական վարչության հաստատման և բրիտանական զորքերի դուրս բերման հարցերի լուծումները:

Գաղթականների տունդարձի հետ կապված հարցերի քննարկումների ամփոփագիր է Ու. Թոմսոնի կողմից Ա. Խատիսյանին ապրիլի 6-ին ուղղված գրությունը[29], որը

---

[23] *Տե՛ս նույն տեղում:*

[24] *Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 90:*

[25] *Տե՛ս նույն տեղում:*

[26] *Տե՛ս նույն տեղում:*

[27] *Տե՛ս նույն տեղում, թ. 141–143:*

[28] *Տե՛ս նույն տեղում:*

[29] *Տե՛ս նույն տեղում, թ. 86–87, նաև՝ Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, վավ. 78, էջ 97–98:*

վերջինս կցել է կառավարությանը ներկայացված հաշվետվությանը[30]: Այստեղ գեներալն արձանագրել է, որ «ժողովրդի վերադարձը Կարսի և Նախիջևանի նահանգների գյուղերը հանդիսանում է ամենակարևոր հարցը: Այնտեղ որտեղ չի լինի հնարավորություն նրանց վերադարձնել իրենց սեփական բնակավայրերը, նրանց պետք է տրվի բնակության այլ վայրեր և պետք է տրվի հնարավորություն գյուղատնտեսությամբ զբաղվելու»[31]: Այնուհետև Ու. Թոմսոնը ևս մեկ անգամ, արդեն գրավոր, նշել է, որ «մինչև հին ռուսական սահմանը վերադառնալու դեպքում նրանց ցուցաբերվելու է անգլիական հրամանատարության ամբողջ հնարավոր պաշտպանությունը՝ առանց ազգության և դավանանքի տարբերության: Բայց նրանք, ովքեր կանցնեն հին ռուսական սահմանը՝ դեպի Թուրքահայաստան, կանեն դա սեփական ռիսկով. ես նրանց որևէ պաշտպանություն չեմ կարող տալ»[32]: Ամփոփելով գաղթականների տունդարձի թեման՝ գեներալը մատնանշել է, որ «ինձ հայտնի է, որ Ձերդ Գերազանցությունը ինձանից ոչ պակաս է ցանկանում առանց ազգության և դավանանքի տարբերության բոլորին վերադարձնել և դա պետք է կատարվի առանց բռնության և արյունահեղության: Յուրաքանչյուր ոք պետք է դա պարզ կերպով հասկանա և գործի վերը նշված սկզբունքներին համապատասխան և անգլիական զորքերի օժանդակությունը կտա բարյացակամ արդյունքներ»[33]:

Ու. Թոմսոնի հետ թիֆլիսյան այդ բանակցություններում Ա. Խատիսյանը երեք հանդիպում է ունեցել: Վերջին՝ երրորդ հանդիպման ժամանակ գեներալը, «բոլոր թուրքահայերի վերադարձը» ևս մեկ անգամ կապելով գեներալ Ջ. Միլնի Այսրկովկաս այցի հետ, մատնանշել է «Կարսի, Նախիջևանի զրավման գործողությունների պլանի իրականացման անհրաժեշտությունը որպես Հայաստանի[34] ստեղծման հերթական քայլեր»[35]: Անկասկած, նման մոտեցումը իրատեսական և ընդունելի է եղել հայկական կողմի համար, քանզի բանակցությունների օրակարգից չէր հանվում «Հայաստանի ստեղծման հերթական քայլերից» հաջորդը՝ Արևմտյան Հայաստան ներգաղթի հարցը:

Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության քաղաքական մասի ղեկավար, բրիգադային գեներալ Ուիլյամ Հ. Բիչի հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում խոսակցությունը գնացել է ապագա Հայաստանի հետ կապված մի քանի հարցերի շուրջ: Ու. Բիչը, խոսելով ընդհանուր վիճակի մասին, Ա. Խատիսյանին հայտնել է Էրզրումի շրջանը թուրքական կանոնավոր զորամասերից

---

[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 91-ի հակ.:
[31] Տե՛ս նույն տեղում, թ. 86:
[32] Տե՛ս նույն տեղում:
[33] Տե՛ս նույն տեղում:
[34] Խոսքը Միացյալ Անկախ Հայաստանի մասին է:
[35] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 164:

մաքրելու և Շեֆկի փաշայի ձերբակալության մասին[36]: Գեներալը ապագա Հայաստանի մասին խոսելիս ներկայացրել է վերջինս վեց վիլայեթներով՝ առանց Կիլիկիայի, Ղարաբաղի, Ախալքալաքի, Բորչալուի գավառի, Տրապիզոնի մոտով ծովի ելքով: Հայաստանի ապագա մայրաքաղաքը պետք է հանդիսանար Էրզրում քաղաքը[37]: Թուրքահայաստան փախստականների վերադարձի մասին հարցի հետ քննարկվել են ներգաղթից հետո Հայաստանի քաղաքական կառավարման համակարգը կազմակերպելու, նրանում ընդգրկվելիք տարածքների և սահմանների, հարևան երկրների ու տերությունների նկատմամբ քաղաքական կողմնորոշումների հարցերը, ինչպես նաև «Երևանյան կառավարության» կողմից առանց հապաղելու Թուրքահայաստանի կառավարումն ընդունելու հնարավորության, վերջինիս նկատմամբ արևմտահայերի վերաբերմունքի և խորհրդարանում նրանց ներկայության ձևի մասին հարցերը[38]: Թուրքահայաստան փախստականների վերադարձի հարցի քննարկման ժամանակ Ու. Բիչը մատնանշել է նաև նոր մարզերն արագ գրավելու անհրաժեշտությունը, այնուհետև խորհուրդ տվել ավելացնել Հայաստանի բանակի թվաքանակը[39]: Ինչպես տեսնում ենք, Արևմտյան Հայաստան ներգաղթի վերաբերյալ գեներալի մոտեցումները որոշ նրբերանգներով տարբերվել են բրիտանական զորքերի հրամանատարության ընդհանուր դիրքորոշումից:

Հասկանալի պատճառներով հանդիպմանը քննարկվել է նաև գաղթականների թվաքանակի հարցը: Ա. Խատիսյանի բնորոշմամբ՝ Ու. Բիչը ներկայացրել է «հայ ազգաբնակչության և փախստականների տեղաբաշխման զարմանալիորեն ճշգրիտ վիճակագրություն», որի համաձայն առկա են եղել 108.000 Կարսի հայեր, «Երևանյան Հայաստանում»՝ 208.000, Վրաստանում՝ 28.000, և Հյուսիսային Կովկասում անհայտ քանակի արևմտահայ փախստականներ, ինչպես նաև Թուրքահայաստանում բնակվող 50.000 հայեր[40]: Միաժամանակ, գեներալը Ա. Խատիսյանին խնդրել է իրեն տրամադրել Հայաստանի մշակույթի և պետական կարգի մասին տվյալներ: Այդ ցանկությունը կատարելու համար Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյանին Ա. Խատիսյանը հանձնարարել է գեներալին համապատասխան տվյալներ տրամադրել և Թուրքահայաստանի կյանքի բոլոր կողմերին գիտակ անձնավորությունների հետ հանդիպումներ կազմակերպել[41]: Այդ հանձնարարականի կատարումը ապահովելու նպատակով՝ Լ. Եվանգուլյանը օրեր անց կազմակերպել է Ու. Բիչի հանդիպումը Թիֆլիսում գտնվող

---

[36] *Տե՛ս նույն տեղում, թ. 143:*
[37] *Տե՛ս նույն տեղում, թ. 90-ի հակ.:*
[38] *Տե՛ս նույն տեղում, թ. 90-ի հակ., թ. 164:*
[39] *Տե՛ս նույն տեղում, թ. 143:*
[40] *Տե՛ս նույն տեղում, թ. 164:*
[41] *Տե՛ս նույն տեղում, թ. 90–91-ի հակ.:*

Արևմտահայ Գործադիր Մարմնի անդամներ Սմբատի (Սմբատ Բորոյան) և Արմեն Սասունու հետ[42]:

1919 թ. մարտի վերջին և ապրիլի առաջին կեսին Հայաստանի Հանրապետության կառավարության ու Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության միջև Արևմտյան Հայաստան ներգաղթի հարցի շուրջ կայացած բանակցություններում հայկական կողմից դրվել են վերադարձող արևմտահայ փախստականների անվտանգության ապահովման համար բրիտանական և հայկական զորամասերով նրանց ուղեկցելու անհրաժեշտության հարցերը: Սակայն, վերջին հանգամանքի հետ կապված, Կովկասում բրիտանական զորքերի հրամանատարության կողմից անընդհատ նշվել է Արևմտյան Հայաստան ներգաղթին իրենց զինված ուժերի անմիջական մասնակցության անհնարինությունը: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունը չուներ ներգաղթի համար անհրաժեշտ քանակի զինական ուժ: Իսկ նոր զորամիավորումների կազմավորման գործն ընթացել է դանդաղ՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ: Միաժամանակ, արևմտահայերից կազմավորված կանոնավոր զորամասերի ձևավորումը նոր պետք է ձեռնարկվեր[43]: Ստեղծված իրավիճակում Արևմտյան Հայաստան վերադարձող փախստականներին ուղեկցելու համար կանոնավոր զորամասերի խնդրի լավագույն լուծումը կլիներ նախատեսվող ներգաղթին զորավար Անդրանիկի և նրա Հարվածող զորամասի անմիջական մասնակցությունը: Այդ հարցում, սակայն, Ա. Խատիսյանի ձեռնարկած քայլերը ցանկալի արդյունքի չեն հանգեցրել:

Ապրիլի 21-ին Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացված «Հայոց Կառավարության և Անգլիական Հրամանատարության ներկայացուցիչների հետ Ալեքսանդրոպոլում տեղի ունեցած խորհրդակցության և Թիֆլիսում գեն. Թոմսոնի հետ ունեցած բանակցությունների» մասին հաղորդագրությունում Ա. Խատիսյանը նշել է, որ «գեն. Բիչի հետ ունեցած խորհրդակցությունից պարզվել է, որ նա մտադիր է գալ Երևան, որպեսզի ծանոթանա, թե ինչ տեսակետի վրա են կանգնած հայ քաղաքական գործիչները և զինվորական հեղինակավոր անձինք Տաճկահայաստանի և տաճկահայ գաղթականության վերադարձի նկատմամբ»: Այդ այցի հետ կապված կառավարությունը որոշել է. «Գեն. Բիչի հետ խորհրդակցություն կազմել և հրավիրել այդ խորհրդակցության գեն. Նազարբեկյանին, Ռուբեն Տեր Մինասյանին և այլ գիտակ անձանց»[44]: Ապրիլի 22-ին «Առաջնորդարանում գեն. Բիչի հետ ներգաղթի մասին ունեցած խորհրդակցության մասին» զեկույցում Արևմտահայ Գործադիր Մարմնի նախագահ Վ. Տերոյանը նշել է, որ «ակնհայտ կերպով երևում է, որ Անգլիացիները ներգաղթը կազմակերպում են այս Հանրապետական կառավարու-

---

[42] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 243, ց. 1, գ. 6, թ. 104:

[43] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 55, թ. 9:

[44] Տե՛ս նույն տեղում, գ. 43, թ. 72:

թյան հետ», որ խորհրդակցությունում քննարկվել է ներգաղթի երեք ծրագիր, և որ «ներգաղթի կազմակերպության համար Հանրապետական կառավարությունը հանձն է առնում տալ 15–16.000 մարդ, Արևմտահայը նույնքան, որով 30.000 մարդու պետք է պարենավորել, Բիչը գտած է, որ այդքան մարդու պարենավորել և զինել առ այժմ անհնար է»[45]: Այդ իրավիճակում գեներալ Բիչը լուծումը տեսել է ներգաղթի գործին զորավար Անդրանիկի մասնակցության մեջ: «Գեն. Բիչը դիմել է գեն. Անդրանիկին և առաջարկել կառավարության հետ համագործակցելով ներգաղթի կազմակերության մեջ մտնել, սակայն Անդրանիկը չի համաձայնվել կառավարության հետ համագործակցել»,– զեկուցել է Վ. Տերոյանը:

Ա. Խատիսյանի և Ու. Բիչի միջև ստեղծվել են փոխադարձ վստահության վրա հիմնված մտերմիկ հարաբերություններ, ինչի վկայությունն է Ալեքսանդրապոլից Ա. Խատիսյանին գեներալի ուղարկած գաղտնի նամակը: Դրանից հասկանալի է դառնում, որ Երևանում գտնվելու ժամանակ՝ ապրիլի 22-ին, Ու. Բիչը հյուրընկալվել է Ա. Խատիսյանի կողմից, ինչի համար գեներալը հայտնել է իր երախտագիտությունը և խնդրել անկեղծ ողջույն փոխանցել տիկին Խատիսյանին: Նամակն ընթերցելիս ակներև է դառնում, որ այն գրվել է հայկական խնդիրներով մտահոգ և հայ ժողովրդի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ունեցող մարդու կողմից:

Երևանում Ա. Խատիսյանի և գեներալ Ու. Բիչի միջև կայացած բանակցությունների ժամանակ, նկատի ունենալով Արևմտյան Հայաստան ներգաղթի համար զինական ուժեր տրամադրելուց բրիտանական հրամանատարության հրաժարվելը և հայկական կանոնավոր զորամասերի սակավությունը, Ա. Խատիսյանը ներկայացրել է արևմտահայ փախստականների վերադարձի մի նոր, այսպես կոչված, «չափավոր նախագիծ», որը հնարավոր կլիներ համաձայնեցնել բրիտանական զորքերի հրամանատարության հետ[46]: Այդ նախագծի համաձայն՝ Բայազետ, Դիադին և Ալաշկերտ պետք է տեղափոխվեին միայն արևմտահայ տղամարդիկ:

Նշված նամակում արևմտահայ փախստականների տունդարձի «չափավոր նախագծի» հետ կապված Ու. Բիչը Ա. Խատիսյանի առջև դրել է մի քանի հարցեր: Առաջին հարցը վերաբերել է նմանօրինակ ներգաղթի պարագայում հարկավոր զորքերի թվաքանակին, երկրորդը՝ այդ թվաքանակից քանիսը պետք է լինեին բրիտանական և քանիսը հայկական, և երրորդը՝ թե որ հայ սպան պետք է կանգներ այդ զորքերի գլուխ, ում հետ համապատասխան բրիտանական սպան կարող էր ճշտել գործի կազմակերպման հետ կապված մանրամասները: Այնուհետև գեներալը նշելով, որ «…եթե դուք կարող եք ինձ տալ շտապ պատասխան, ապա հնարավոր կլիներ ինչ որ բան լուծել այդ ուղղությամբ», խնդրել է հնարավորինս պահպանել այդ գործի գաղտ-

---

[45] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. Պ-243, ց. 1, գ. 7, թ. 20-ի հակ.:*

[46] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 16:*

նիությունը[47]: Ըստ էության, Ու. Բիչը իր պատրաստակամությունն է հայտնել առաջ տանելու արևմտահայ փախստականների ներգաղթի հարցին որոշակի լուծում տալու գործը: Ալեքսանդրապոլից ուղարկված գեներալի գաղտնի նամակի պատասխանը հեռագրվել է ապրիլի 26-ին[48], իսկ ավելի ծավալուն նամակ ուղարկվել է ապրիլի 27-ին[49]: Նամակում Ա. Խատիսյանը ներկայացրել է Բայազետ, Դիադին և Ալաշկերտ փախստականների ներգաղթի համար անհրաժեշտ 300 անգլիական և 2000 հայ զինվորների թվաքանակը՝ նշելով, որ Բայազետ և Դիադին ներգաղթը պետք է իրականացվի Իգդիրով, իսկ Ալաշկերտ՝ Կաղզվանով: Նա նաև հայտնել է, որ այդ գործի ղեկավարությունը դրվելու է ռազմական նախարարի օգնական (տեղակալ) Դրոյի (Դրաստամատ Կանայան) վրա[50]:

Արևմտահայ փախստականների տունդարձի հետ կապված հարցերի պարզաբանման գործում կարևոր նշանակություն են ունեցել ապրիլի 30-ին Երևանում կայացած հայ-բրիտանական բանակցությունները[51]: Բրիտանական կողմը բանակցություններում ներկայացրել են Կոստանդնուպոլսից ժամանած գեներալ Ջորջ Ֆ. Միլնը և նրա ենթակա գեներալ Ու. Թոմսոնը, հայկական կողմը՝ Ա. Խատիսյանը: Հայրենի բնակավայրեր արևմտահայ փախստականների վերադառնալու հարցը բանակցությունների օրակարգում երրորդն է եղել: Այդ հարցի քննարկման ժամանակ Ջ. Միլնը՝ նշելով, որ Թուրքահայաստանում պարեն չկա, դեմ է արտահայտվել արևմտահայ փախստականների ներգաղթի իրագործմանը: Նա կատեգորիկ հայտարարել է, որ առանց Կոստանդնուպոլսի բրիտանական զորքերի հրամանատարության թույլտվության չի կարելի փախստականներին ուղարկել 1914 թ. հին ռուսական սահմանից այն կողմ, և այդ թեմայով Կոստանդնուպոլսում ոչ մի խոսակցություն չի եղել, առավել ևս չի կարող խոսք լինել միայն հայկական զորքերի ուղեկցությամբ գաղթականների վերադարձի մասին: Միաժամանակ, գեներալը նշել է, որ իր իշխանությամբ ինքը չի կարող այդ նպատակի համար անգլիական զորք տրամադրել: Ասելով, որ ամերիկացիները հայտարարել են, որ դեպի Թուրքիա փախստականների շարժի դեպքում չեն կարող նրանց այնտեղ կերակրել, Ջ. Միլնը նկատել է, որ արևմտահայ գաղթականները պետք է մնան տեղերում և այնտեղ էլ աշխատեն[52]: Այդ ամենին ի պատասխան՝ Ա. Խատիսյանն ասել է, որ արևմտահայ փախստականները «մեր տարածքում զբաղեցնում են թաթարական բնակավայրերը, և այդ պատճառով թաթար-

---

[47] *Տե՛ս նույն տեղում:*

[48] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 98, նաև՝ գ. 55, թ. 1:*

[49] *Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 99 և 99-ի հակ.:*

[50] *Տե՛ս նույն տեղում, թ. 99:*

[51] *Տե՛ս նույն տեղում, թ. 148–150:*

[52] *Տե՛ս նույն տեղում, թ. 148:*

ների վերադառնալը իրենց տեղերը նույնպես հապաղում է»[53]: Ա. Խատիսյանի այդ հայտարարությունն ավելի շատ ուղղված է եղել բանակցություններին մասնակցող գեներալ Ու. Թոմսոնին, քանզի Ջ. Միլնի նմանօրինակ մոտեցումը միանշանակ հակասել է գաղթականության հարցին վերաբերող ապրիլի 6-ի Ու. Թոմսոնի նամակին: Մյուս կողմից, արևմտահայ և թաթարական գաղթականների վերադարձի հարցի լուծման հետաձգումը հղի է եղել վերջիններիս դժգոհություններով և ընդվզումներով, տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմամբ, այսինքն՝ բրիտանական զորքերի հրամանատարության որդեգրած քաղաքականության խաթարմամբ: Պատահական չէ, որ բանակցությունների վերջում, անդրադառնալով գաղթականների տունդարձի հարցին, գեներալ Ու. Թոմսոնը միանշանակ պնդել է, որ «համարում է, որ փախստականները՝ անկախ ազգությունից, պետք է վերադարձվեն իրենց տեղերը»[54]:

Ամենայն հավանականությամբ, Ա. Խատիսյանի վերը նշված հայտարարությունից հետո բանակցություններում ծագած լարվածությունը թուլացնելու նպատակն է հետապնդել գեներալ Ջ. Միլնի կողմից մեկ անգամ ևս կրկնված այն պնդումը, «որ նա դեռևս չի կարող փախստականներին ռուսական սահմանից այն կողմ գնալու թույլատվություն տալ»[55]: Այստեղ առանցքայինը «դեռևս» բառն է, որը նշանակել է, որ արևմտահայ փախստականների տունդարձի վերաբերյալ Ջ. Միլնի մինչ այդ ներկայացված կոշտ դիրքորոշումը վերջնական չէ: Այդ մասին է վկայել նաև այն հանգամանքը, որ դրանից հետո «զրույցը գնացել է նրա մասին, թե ինչ կարգով ավելի լավ կլիներ Թուրքական Հայաստանի մարզերի գրավումը»[56]: Գեներալ Ջ. Միլնը հայտնել է այն տեսակետը, «որ հայերի առաջխաղացումը թուրքական տարածք պետք է անցկացվի դանդաղ, վերցնելով իրենց հետ պարենի պաշարներ, որովհետև Թուրքիայում ոչ մի պարեն չկա»[57]: Շարունակելով խոսքը՝ գեներալը ասել է, որ ինչ վերաբերում է Էրզրումին և դրանից արևելք ընկած շրջանին, ապա «այնտեղ գնալը դեռևս վտանգավոր է, թեկուզև անգլիացիները առաջարկել են թուրքերին մաքրել այդ շրջանը, նրանք դեռևս այդ շրջանը չեն համարում անվտանգ»[58]: Արևմտահայ փախստականների ներգաղթի վերաբերյալ վերջնական, ըստ էության, մերժողական պատասխան չտալը պայմանավորված է եղել բրիտանական հրամանատարության շահադիտական նկատառումով: Դրանով նրանք ձգտել են չվանել հայկական կող-

---

[53] *Նույն տեղում:*
[54] *Տե՛ս նույն տեղում, թ. 150:*
[55] *Տե՛ս նույն տեղում, թ. 148-ի հակ.:*
[56] *Տե՛ս նույն տեղում:*
[57] *Տե՛ս նույն տեղում:*
[58] *Տե՛ս նույն տեղում:*

մին արդեն իսկ փոխադարձ համաձայնեցված Կարսի և Շարուր-Նախիջևանի հետ կապված քաղաքականության իրագործումից:

Արևմտահայ փախստականների տունդարձի վերաբերյալ բրիտանական զորքերի հրամանատարության ամփոփ դիրքորոշումը նորից ներկայացվել է մայիսի 4-ին՝ Ա. Խատիսյանին ուղարկած գեներալ Թոմսոնի նամակում: Այստեղ ևս մեկ անգամ նշվել է, որ «ոչ մի զորախումբ Անգլիական կամ Հայկական չի անցնելու թրքական սահմանը, փախստականների վերադարձը Տաճկահայաստան լինելու է իրենց ռիսքով և տեղափոխությունը տեղի է ունենալու Սարիղամիշ-Էրզերում և Շահթախտ-Բայազետ երկաթուղիներով»[59]: Այստեղ առկա է մի նորություն, որ գաղթականների տեղափոխումը պետք է իրականացվի երկաթուղով: Միաժամանակ այդ նամակը վկայել է այն մասին, որ խնդրո առարկա հարցին որոշակի լուծում տալու գեներալ Ու. Բիչի ստանձնած պարտավորվածությունը՝ բրիտանական և հայկական զորամասերով վերադարձող փախստականներին ուղեկցելու առումով, չի հանգեցրել դրական արդյունքի[60]: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ, չկարողանալով տրամադրել բրիտանական զորամասեր, Ջ. Միլնը համաձայնվել է արևմտահայ փախստականների տունդարձի ժամանակ ասորական զորամասերի օգտագործմանը[61]:

Արևմտահայ փախստականների տունդարձի հարցը Ա. Խատիսյանի կողմից բարձրացվել է նաև գեներալ Ու. Բիչին մայիսի 6-ին ուղղված նամակում[62]: Դրանում արծարծված որոշ հարցեր պարզաբանվել են Ու. Թոմսոնի հետ Ա. Խատիսյանի մայիսի 9-ի թիֆլիսյան հանդիպման և բանակցությունների ժամանակ[63]: Արդյունքում, մայիսի 11-ին լեյտենանտ Ռեյին ուղարկված հուշագրում արձանագրվել է, որ բրիտանական զորքերի հրամանատարությունը տվել է իր համաձայնությունը շուրջ 15.000 արևմտահայ տղամարդ գաղթականների Բայազետ, Դիադին և Ալաշկերտ վերադարձի համար[64]: Ընդ որում, վերադարձը պետք է լիներ առանց բրիտանական կամ հայկական զորամասերի ուղեկցության: Այնուհետև նշվել է, որ «Հայկական Կառավարության նախագահ պ. Խատիսյանը այժմ խնդրում է մի բրիտանական սպայի ներկայությունը, որպեսզի Հայերի և Մուսուլմանների միջև հնարավորություն չլինի ընդհարումների»[65]: Հանձնարարելով լեյտենանտ Ռեյին ներկա լինելու արևմտահայ գաղթականների վերադարձին, որը պետք է տեղի ունենար մայիսին և

---

[59] *Նույն տեղում, գ. 53, թ. 27, նաև՝ ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 28:*

[60] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 32, թ. 115:*

[61] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 41:*

[62] *Տե՛ս նույն տեղում:*

[63] *Տե՛ս նույն տեղում:*

[64] *Տե՛ս նույն տեղում, թ. 22:*

[65] *Նույն տեղում:*

վերջանար մեկ ամսվա ընթացքում, նրան առաջակվել է «նամակը ստանալուն պես հարաբերության մեջ մտնելու պ. Խատիսյանի հետ», նրանից ճշտելու վերադարձի ժամկետները, քանզի այդ առաջխաղացման ժամանակ նա պետք է առաջնորդվի Ա. Խատիսյանի կողմից ստացված հրահանգներով[66]:

Ա. Խատիսյանը բավականին լավատեսորեն է տրամադրված եղել Արևմտյան Հայաստան ներգաղթի հեռանկարների հարցում: Այսպես, օրինակ, գեներալ Ք. Դեյվիի հետ Կարս այցելության ժամանակ նա մայիսի 11-ին Սուրբ Առաքելոց եկեղեցում բարձրաձայնել է իր այն համոզվածությունը, որ մինչև մայիսի 15-ը հայկական բանակը կլինի ռուսական հին սահմանի մյուս կողմում՝ գրավելով Ալաշկերտի հովիտը և Բասենը[67]: Այդ լավատեսությունը առաջին հերթին հիմնվել է այն իրողության վրա, որ ապրիլի վերջին – մայիսի սկզբին բրիտանական զորքերի հրամանատարության հետ համատեղ իրականացվել է Հայաստանի Հանրապետության իշխանության հաստատումը և փախստականների տունդարձը Կարսում[68]: Միաժամանակ, մայիսի սկզբին Թիֆլիսում Ու. Թոմսոնի մոտ կայացած հերթական խորհրդակցությունում, որին մասնակցել են նաև գեներալներ Ու. Բիչը, Ա. Բրաֆը և Ք. Դեյվին, Ա. Խատիսյանը կարողացել է հասնել նրան, որ Ու. Թոմսոնը հրաժարվի Զանգեզուրի հետ կապված Շարուր-Նախիջևանը Հայաստանի Հանրապետության կառավարմանը հանձնելու գործընթացի կանխարգելման մասին իր որոշումից: Բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանի դրսևորած դիվանագիտական փայլուն ունակությունների շնորհիվ վերահաստատվել է Շարուր-Նախիջևանում բրիտանական զորքերի հրամանատարության օժանդակությամբ Կարսի նման գործողության իրականացման վերաբերյալ նախկինում ձեռք բերված որոշումը[69]: Մինչև ռուսական հին սահմանն ընկած շրջաններում իր իշխանությունը հաստատելով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրական հնարավորություն է ձեռք բերել Արևմտյան Հայաստան ներգաղթի իրագործման համար:

Արևմտյան Հայաստան ներգաղթի Ա. Խատիսյանի լավատեսորեն տրամադրվածության մասին է վկայում նաև այն իրողությունը, որ ներգաղթի իրագործման նպատակով կառավարությունը սկսել է կատարել համապատասխան կազմակերպչական աշխատանք՝ իրականացնելով այդ հարցի նախապատրաստմանն ուղղված համապատասխան քայլեր: Մայիսի 13-ին նախարարների խորհուրդը քննարկել է Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու մասին խնամատարության նախարար Ս. Թորոսյանի զեկուցումը[70]: Կառավարությունը որոշել է հանձնարարել վարչապետին

---

[66] Տե՛ս նույն տեղում:

[67] Տե՛ս Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 261:

[68] Տե՛ս նույն տեղում:

[69] Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1993, - 1–2, էջ 99–101:

[70] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 96:

«բանակցությունների մեջ մտնել արևմտահայ կազմակերպությունների հետ Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու հարցի առթիվ»: Զինվորական նախարարին հանձնարարվել է ներկայացնել զեկուցում՝ Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու համար անհրաժեշտ զինական ուժի և նախարարության կողմից այն տրամադրելու հնարավորությունների մասին, իսկ խնամատարության նախարարությանը՝ ներգաղթի համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ: Որոշվել է նաև դաշնակիցներին հաղորդել Ալաշկերտի ներգաղթը կազմակերպելու գործում «անգլիական զորքերի սակավության և նրանց շուտ հեռանալու ցանկության պատճառով» դժվարությունների մասին[71]*:*

Սակայն մայիսի կեսերին հայ-բրիտանական բանակցային գործընթացը խաթարվել է: Մայիսի 19-ին կառավարությունում ստացվել է մայիսի 10-ին Ա. Խատիսյանին ուղարկված գեներալ Ու. Թոմսոնի նամակը: Վերջինս Ա. Խատիսյանին տեղեկացրել է, որ Այսրկովկասում բրիտանական զորքերը փոխարինվելու են իտալական բանակով, և իտալական սպաների առաքելությունը շուտով ժամանելու է Բաթում: Վերջում Ու. Թոմսոնը գրել է, որ այդ մասին անձամբ է տեղեկացրել Ա. Խատիսյանին, քանզի մեկնում է Անգլիա, և իրեն փոխարինելու է գեներալ-մայոր Ջորջ Ն. Կորին[72]*: Ակներև է, որ մոտ ապագայում բրիտանական զորքերն իտալականով փոխարինելու հանգամանքը Հայաստանի Հանրապետության կառավարության և Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության միջև բանակցությունները դարձրել են անհեռանկարային: Իսկ հայ-բրիտանական բանակցային գործընթացում բրիտանական կողմի գլխավոր դերակատար գեներալ Ու. Թոմսոնի հեռանալը հանգեցրել է նրան, որ մինչ այդ նրա և նրա զինակիցների հետ արևմտահայ փախստականների տունդարձի հարցի՝ նույնիսկ դրա «չափավոր նախագծի» տարբերակով լուծումների շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունները, ըստ էության, կորցրել են իրենց նշանակությունը: Այսպես, Ու. Թոմսոնին փոխարինած գեներալ Ջ. Կորիի հետ բանակցություններում Ա. Խատիսյանը հայտարարել է, որ «հայ ժողովրդին և կառավարությանը հետաքրքրող առաջին և գլխավոր հարցը արևմտահայ փախստականների վերադարձի հարցն է»*[73]*: «Հայկական Կառավարությունը համարում է անհնարին թույլատրելու փախստականների շարժումը առանց զինվորական պահպանության»*[74]*,– ասել է Ա. Խատիսյանը: Բանակցություններում նշված և մի քանի այլ հարցերի հետ կապված գեներալը հարցրել է, թե ինչու դրանք չեն քննարկվել մինչ այդ, ինչին Ա. Խատիսյանը պատասխանել է, որ արևմտահայ փախստականների տունդարձի հարցը ժամանակին բարձրացվել է և մինչև իսկ կայացվել է համաձայնություն,*

---

[71] *Տե՛ս նույն տեղում:*

[72] *Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 110:*

[73] *Տե՛ս նույն տեղում, թ. 115:*

[74] *Նույն տեղում:*

թե հայկական և անգլիական ինչքան զորքեր են հարկավոր[75]: Ինչպես տեսնում ենք, բանակցություններում Ջ. Կորին հադես է բերել բացարձակ անտեղյակություն՝ արևմտահայ փախստականների տունդարձի հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության և բրիտանական զորքերի հրամանատարության միջև մինչ այդ կայացած հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածություններից և փոխադարձ պարտավորություններից: Այնուամենայնիվ, գեներալը խոստացել է փախստականների տունդարձի անվտանգության հարցը բարձրացնել Կոստանդնուպոլսում տեղակայված բրիտանական զորքերի գլխավոր շտաբի առջև[76]: Հունիսի 7-ին ստացվել է Ա. Խատիսյանին ուղղված Ջ. Կորիի հեռագիրը, որում ասվել է, որ «Կ. Պոլսից հրահանգներ են ստացվել, որ չնայած բարձր հրամանատարությունը համակրանքով է վերաբերվում հայերի հայրենադարձությանը և զգում է այն մեծ դժվարությունները, որ կապված են դրա հետ, սակայն չի կարող թույլ տալ իր զորքերին՝ թրքական սահմաններն անցնելու, աքսորյալների (փախստականների – Կ. Հ.) հետ միասին»[77]:

Այսպիսով, 1919 թ. մարտի կեսից Այսրկովկասում բրիտանական զորքերի հրամանատարության կողմից իրականացվող քաղաքականության մեջ արմատական փոփոխություն է տեղի ունեցել: Հետևանքը եղել է այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության և բրիտանական զորքերի հրամանատարության միջև ընթացող բանակցային գործընթացում ուրվագծվել են դրական տեղաշարժեր: Այդ հանգամանքները, ինչպես նաև ապրիլին ու մայիսին Արևմտահայաստանի սահմանային շրջաններում Հայաստանի Հանրապետության իշխանության հաստատումը, կառավարության մոտ իրատեսական սպասելիքներ են առաջացրել բրիտանական հրամանատարության հետ բանակցություններում արևմտահայ փախստականների հայրենիք վերադառնալու հարցին անմիջական և կոնկրետ լուծումներ տալու առումով: Մինչև Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից Արևմտյան Հայաստանի վերաբերյալ համապատասխան որոշումների ընդունումը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ օգտագործելով գաղթականների հետ կապված ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և մարդասիրական հանգամանքները, դիվանագիտական համապատասխան միջոցներ է ձեռնարկել Արևմտյան Հայաստան փախստականների ներգաղթն իրագործելու ուղղությամբ, ինչը իրական քայլ կհանդիսանար Հայկական հարցի լուծման գործում:

Բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանը բրիտանական հրամանատարության առջև հետևողականորեն բարձրացրել է արևմտահայ փախստականների տունդարձի հարցը՝ գիտակցելով, որ այն հնարավոր կլինի իրականացնել Կարսում

---

[75] Տե՛ս նույն տեղում, թ. 115-ի հակ.:

[76] Տե՛ս նույն տեղում:

[77] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 71:

և Շարուր-Նախիջևանում հանրապետության իշխանությունը հաստատելուց ու արևելահայ գաղթականների վերադառնալուց անմիջապես հետո: Սակայն, ստանալով սեփական պատասխանատվությամբ, առանց բրիտանական զինված ուժերի մասնակցության Արևմտյան Հայաստան ներգաղթի իրագործման մասին բրիտանական հրամանատարության համաձայնությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունը, չունենալով համապատասխան հնարավորություններ և զինական ներուժ, չի իրագործել արևմտահայ փախստականների տունդարձը: Փաստորեն, աշխարհաքաղաքական բարենպաստ զարգացումների և հայ դիվանագիտության շնորհիվ ընձեռած պատմական հնարավորությունը Հայաստանի Հանրապետության կողմից չի օգտագործվել: Թեև 1919 թ. գարնանը Արևմտյան Հայաստան ներգաղթ չի իրականացվել, այնուամենայնիվ, արևմտահայ փախստականների տունդարձի հարցը Հայաստանի Հանրապետության համար մնացել է իրական լուծումներ պահանջող արտաքին քաղաքական խնդիր:

ВОПРОС ВОЗВРАЩЕНИЯ НА РОДИНУ ЗАПАДНОАРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В ПЕРЕГОВОРАХ С КОМАНДОВАНИЕМ БРИТАНСКИХ ВОЙСК
(Март–май 1919 г.)

КАРЕН АЙРАПЕТЯН

Резюме

Одним из важнейших эпизодов истории Республики Армения (1918–1920 гг.) являются состоявшиеся в марте–мае 1919 г. в Закавказье переговоры между правительством РА и командованием британских войск по вопросу возвращения западноармянских беженцев на родину. В марте в проводимой в Закавказье британским командованием политике произошли коренные изменения. Это способствовало положительным подвижкам в переговорном процессе между правительством РА и командованием британских войск. В этих переговорах было получено согласие британского командования на осуществление правительством РА репатриации беженцев в Западную Армению, под собственную ответственность, без участия британских вооруженных сил. В результате, получив согласие британского командования, правительство РА, не имея соответствующего военного потенциала, не осуществило возвращение на родину западноармянских беженцев.

THE ISSUE OF THE WESTERN ARMENIAN REFUGEES' REPATRIATION IN THE NEGOTIATIONS WITH THE COMMAND OF THE BRITISH TROOPS
(March – May 1919)

KAREN HAYRAPETYAN

Summary

The negotiations held between the Government of the Republic of Armenia and the Command of the British troops in Transcaucasia over the Western Armenian refugees' repatriation in March–May 1919 is one of the important episodes of the foreign policy and the diplomatic history of the Republic of Armenia (1918 – 1920). In March a radical change took place in the policy being pursued by the British Command in Transcaucasia. The consequence was that positive moves occurred in the negotiation process going on between the Government of the Republic of Armenia and the British Command. During those negotiations an agreement was reached by the British Command on implementation of the immigration to the Western Armenia without participation of the British Armed Forces, on the Armenians' responsibility. As a result, getting the agreement of the British Command on the immigration to the Western Armenia, the Government of the Republic of Armenia, not having appropriate military potential, did not undertake the implementation of the Western Armenian refugees' repatriation.